600.0430.20.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2019 թվականի №430Ա
քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ «ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԼՅՈՒՍ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 15-ի №223/19-И11 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի «Այլընտրանքային պլյուս» այլընտրանքային սակագնային փաթեթ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
20 նոյեմբերի 2019թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի նոյեմբերի 20-ի №430Ա որոշման

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԼՅՈՒՍ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹ «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Չափի միավորը	Առանց ավելացված արժեքի հարկի	Ներառյալ ավելացված արժեքի հարկը
1.	Հեռախոսագծի տեղադրման միանվագ ծառայություն	դրամ	1250.00	1,500.0
2.	Հեռախոսագծի բաժանորդային վճար	դրամ/ամիս	2,083.33	2,500.0
3.	Ամսական տրամադրվող անվճար ելքային զանգերի չափաքանակ դեպի Հայաստանի Հանրապետության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված բոլոր ցանցեր	րոպե/ամիս	400	
4.	Անվճար ելքային զանգերի չափաքանակ փակ խմբի ներսում	րոպե/ամիս	Անսահմանափակ	
5.	Ելքային զանգեր դեպի Հայաստանի Հանրապետության այլ օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցեր՝ սույն սակագնային փաթեթի 3-րդ կետով սահմանված 400 րոպե չափաքանակը սպառելուց հետո	դրամ/րոպե	3.33	4.0
6.	Ելքային զանգեր դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանց	դրամ/րոպե	4.17	5.0
7.	Ելքային զանգեր դեպի Հայաստանի Հանրապետության հանրային շարժական բջջային կապի ցանցեր	դրամ/րոպե	20.00	24.0
8.	Ելքային զանգեր դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային շարժական բջջային կապի ցանցեր	դրամ/րոպե	20.83	25.0
9.	Զանգահարող համարի ավտոմատ ներկայացում			
1)	Մինչև 1000 հեռախոսագիծ ունեցող բաժանորդների համար	դրամ/ամիս	166.67	200.00
2)	1000 և ավելի հեռախոսագիծ ունեցող բաժանորդների համար	դրամ/ամիս	Անվճար	
10.	Զանգահարող համարի ավտոմատ ներկայացում ծառայության ակտիվացում			
1)	Մինչև 1000 հեռախոսագիծ ունեցող բաժանորդների համար	դրամ	583.33	700.00
2)	1000 և ավելի հեռախոսագիծ ունեցող բաժանորդների համար	դրամ	Անվճար	

1. Սույն հավելվածով սահմանված սակագնային փաթեթով ամրագրված սակագներն առավելագույն մեծություններ են և դրան կարող են միանալ 200 և ավելի հեռախոսահամարներ ունեցող կամ դրանց համար դիմող իրավաբանական անձինք՝ գրավոր դիմումի հիման վրա և առնվազն 24 ամիս ժամկետով պայմանագիր կնքելու (վերակնքելու) դեպքում:

2. Սույն հավելվածով սահմանված սակագնային փաթեթի համար պայմանագրի կնքման ամսաթվից 24 ամիսների ընթացքում բաժանորդի նախաձեռնությամբ այն լուծելու դեպքում գանձվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի և «ԱրմենՏել» ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին №340Ն որոշման 1-ին կետով հաստատված №1 հավելվածով իրավաբանական անձանց համար նախատեսված «Գնային տարբերակ-1»-ով և սույն սակագնային փաթեթեով (հաշվարկված ըստ ամիսների) սահմանված ակագների տարբերությունը: Սույն կանոնը կիրառվում է նաև «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության նախաձեռնությամբ բաժանորդի կողմից պայմանագրի պայմաններր խախտելու հիմքով պայմանագրի լուծման դեպքում:
3. Սույն հավելվածով սահմանված սակագնային փաթեթի «Փակ խմբի» բաժանորդները միևնույն կազմակերպության անունով (միևնույն հարկ վճարողի հաշվառման համար) գրանցված «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի բաժանորդներն են:
4. Սույն հավելվածով սահմանված սակագնային փաթեթով չներկայացված սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների համար կիրառվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» №340Ն և 2007 թվականի նոյեմբերի 16-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող առանձին ծառայությունների առավելագույն սակագների սահմանման մասին» №530Ն որոշումներով սահմանված սակագներր, որոնք առավելագույն մեծություններ են: